ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

ք.Աշտարակ 2025թ. հունվարի 23-ին, N 8-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԲԱԶԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՓՈՓՈԽՎՈՂ ԲԱԶՄԱՊԱՏԻԿ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐՆ ԸՍՏ ԱՄԻՍՆԵՐԻ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 12-րդ մասի 5-րդ կետի, «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ և 20-րդ հոդվածների, «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասի, «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հուլիսի 3-ի N 737-Ն որոշման 1-ին կետի 1-ին և 2-րդ ենթակետերով հաստատված N 1 և N 2 հավելվածների՝ որոշում եմ.

Հաստատել՝

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի աշխատակազմի հաստիքացուցակը՝ համաձայն N 1 հավելվածի,
2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի աշխատակազմի 2025 թվականի հաստիքացուցակում տվյալ պաշտոնում աշխատանքային ստաժի համապատասխան քաղաքացիական ծառայողների բազային աշխատավարձի նկատմամբ փոփոխվող բազմապատիկ գործակիցներն ըստ ամիսների՝ համաձայն N 2 հավելվածի:

Восстановимая подпись

VERIFIED OCSP 1/24/2025 14:15:51 GMT+4

Подписано: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ